ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Զինղեկի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

ԱՌԱՐԿԱ՝ ՆԶՊ

ՀԵՂԻՆԱԿ՝ Ա. Մանուկյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ «Սիսիանի թիվ1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Գրիգորյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ.1 Զինղեկի համագործակցությունը աշակերտների ծնողների հետ՝ հայրենասիրական դաստիարակման և կրթության կազմակերպման հարցերում 1.1 Հայրենասիրական դաստիարակությունը՝ «ՆԶՊ» ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում.....5

1.2 Զինղեկի և աշակերտի ծնողների համագործակցությունը՝ որպես կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման միջոց.....8

1.3 ՆԶՊ-ի դասավանդման ընթացքում աշակերտների հայրենասիրական դաստիարակության եղանակները.....12

Եզրակացություններ և առաջարկություններ.....15
Օգտագործված գրականության ցանկ.....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Յուր ազգն ու հայրենիքը չսիրող անձը մարդկային կյանքի մեջ ապրելու իրավունք չունի»: Խրիմյան Հայրիկ

Մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակությունը կրթական համակարգի կարևորագույն խնդիրներից մեկն է: Այդպես եղել է մեր ողջ բազմադարյան պատմության ընթացքում՝ պայմանավորված մեր պայքարող, չհանձնվող, ազատասեր տեսակով: Դեռ վաղնջական ժամանակներից մեր հերոսները՝ Հայկը, Արտաշեսը, Տիգրանն ու Արա Գեղեցիկը, իրենց ազատասիրական պատգամներն են հղել գալիք սերունդներին, իրենց հերոսական օրինակն են պատգամել, քանի որ հայ ժողովրդի գոյատևման ու հարատևման հիմքում հենց հայրենասիրությունն է դրված եղել: Այդպես է նաև այսօր: Հայրենիքի նկատմամբ սերը, հարգանքն ու պատկառանքն ունակ են անձի մեջ ձևավորել այնպիսի բարոյական որակներ, ինչպիսիք են ազնվությունն ու արդարությունը, սեփական տունն ու ընտանիքն անվերապահորեն պաշտպանելու պատրաստակամությունը, պայքարելու և չհանձնվելու հատկությունները: Հզոր է հայ ժողովրդի ռազմական անցյալը, հզոր են մեր հերոսները: Դարեր ի վեր հայը ռազմիկ է եղել, պայքարող ու չհանձնվող զինվոր, ով որևէ անգամ նախահարձակ չի եղել, միշտ պաշտպանել է իր ունեցածը: Հենց այս բարոյական ու հզոր օրինակն է, որ նոր ձևավորվող, կյանքը նոր ճանաչող աշակերտի համար պետք է դառնա կյանքի ուղենիշ: Աշակերտների մեջ հայրենասիրական ոգին բարձրացնելու, հայրենաճանաչության կարևոր առաքելությունն իր վրա վերցրել են հանրակրթական դպրոցի մի շարք ուսումնական առարկաներ դասավանդող ուսուցիչներ, այդ թվում նաև զինղեկը: Այս առումով առանցքային դեր ու կարևորություն ունի ՆԶՊ առարկան, որի դասավանդման շրջանակներում սովորողը ճանաչում է հայրենիքն ու նրա փառավոր էջերը, սովորում ժամանակակից ռազմարվեստի տեսություն, գնահատում հակառակորդ երկրների ռազմական ներուժը: Առարկայի դասավանդման ընթացքում աշակերտները ձեռք են բերում նաև բազմաթիվ գործնական կարողություններ ու հմտություններ, կամային բարձր որակներ, դառնում են առավել բարեվարք ու մարդասեր: Ինչպես նշեցինք, առանցքային է զինղեկի դերակատարումը: Նա իր օրինակելի վարքով պետք է 4 սովորողների համար դառնա մոտիվացիայի աղբյուր, սովորողը պետք է զինղեկին վերաբերվի որպես ավագ ընկեր, վստահի ու հավատա, փորձի դառնալ նույնքան կարգապահ ու բանիմաց: Առանցքային նշանակություն ունի նաև զինղեկի՝ աշակերտների ծնողների հետ տարվող աշխատանքը: Այսպիսով, կարծում ենք, որ ՆԶՊ ուսումնական առարկան իր անփոխարինելի ներգործությունն է ունենում սովորողների կրթության ու դաստիարակության վրա, ապահովում է բանակ-դպրոցական կապը, սովորողների մոտ ձևավորում բարձր բարոյական արժեքներ ու հայրենասիրական նվիրական զգացմունքներ:

ԳԼՈՒԽ 1 ԶԻՆՂԵԿԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԱԿԵՐՏ-ՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ՝ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՄԱՆ և ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

1.1 Հայրենասիրական դաստիարակությունը՝ «ՆԶՊ» ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում

Հայրենասիրական դաստիարակությունը իր ուրույն տեղն է զբաղեցնում ժամանակակից կրթական համակարգում: Աշակերտների մոտ հայրենիքի նկատմամբ պատկերացումները ճիշտ ձևավորելու, սիրո զգացմունքն արմատավորելու և հայրենիքի պաշտպանի գիտակցումը սերմանելու պարտականությունը դրված է յուրաքանչյուր ուսուցչի վրա: Խնդիրն ավելի է կարևորվում՝ պայմանավորված արդի մարտահրավերներով, երբ հայրենասիրական մղումներն ու հայրենանվեր գաղափարներն անհրաժեշտություն են, քանի որ այսօրվա աշակերտը վաղը պիտի դառնա հայրենիքի պաշտպան: Հայրենիքը միայն հողը չէ, ինչը պետք է պաշտպանել, հայրենիքը նաև յուրաքանչյուր աշակերտի տունն է, ընտանիքն ու ծնողները: Հայրենասիրական դաստիարակությունը առանցքային դերակատարում ունի նոր ձևավորվող սերնդի արժեհամակարգի ձևավորման վրա, քանի որ հայրենիքի նկատմամբ սերն է, որ կարող է սովորողների մեջ արթնացնել մարդասիրություն, բարություն, ազգային արժեքները ճանաչելու և դրաց վրա սեփական ապագան կառուցելու ցանկություն: Մատաղ սերնդին հայրենասեր դաստիարակել՝ նշանակում է ջանք ու եռանդ չխնայել հայրենիքի բարգավաճման, ժողովրդի բարեկեցության համար, լինել օրինապաշտ, բարի ազնիվ ու բարիացկամ, հարգել ազգային մշակութային արժեքները, սահմանված կարգ ու կանոնը, լինել կարգապահ, հարկ եղած դեպքում կյանքը չխնայել հանուն հայրենիքի:

Հայրենասիրական դաստիարակության մեջ իր առանցքային դերն ու գործառույթներն ունի «ՆԶՊ» առարկան: Առարկայի դասավանդման շրջանակներում աշակերտները ծանոթանում են մեր բազմադարյան պատմության հաղթանակներին, մեծանուն հայերի, ռազմական գործիչների, նշանավոր զորավարների քաջագործություններին: Այս ամենն ինքնանպատակ չի արվում: Հայրենասիրությունը սկսվում է հայրենաճանաչությունից, ուստի աշակերտը պետք է լավ իմանա իր պատմությունը, հերոսներին, ծանոթ լինի կենաց մահու կռիվներում սրբադասված քաջերի կյանքին ու ռազմական ուղուն: Հենց այսպես է, որ աշակերտի մեջ կարելի է արթնացնել սեր, պատկառանք դեպի հայրենիքը: Մեծն Խաչատուր Աբովյանն ասել է. «Ապրել ու մեռնել հայրենիքի համար, ահա խնդիրը, որ իբրև նպատակ՝ ես ընտրել եմ ինձ համար իմ մանկության օրերից »: Այսպես էր պատկերացնում հայրենասիրությունը հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը: Եվ ոչ միայն Աբովյանն էր հզոր հայրենասեր: Մեր բազմադարյան պատմության մեջ անհաշվելի են քաջերն ու հերոսները, ում հերոսական օրինակով էլ այսօր հայ ուսուցիչը բորբոքում է աշակերտի հայրենասի-րական ոգին, ցույց տալիս հայի բազկի ուժը, որն անպարտելի է: Հավելենք նաև, որ առարկայի դասավանդման ընթացքում սովորողները

ծանոթանում են նաև մի շարք երկրների բանակների կառուցվածքին, առանձնահատկություններին, դրանց սպառազինությանը, տեխնիկական հագեցվածությանը, սովորում են ինքնաձիգի մարտական և տեխնիկական հնարավորությունները, մասնակցում են ուսումնամարզական հրաձգային պարապունքներին և ռազմադաշտային վարժություններին, ծանոթանում են շարային պատրաստության հիմնական կանոններին: Պակաս կարևոր չեն նաև ցուցադրական դասերը, որոնց շրջանակներում դասը վարում է սպան, պատերազմի բովով անցած զինվորականը, ազատամարտիկը որոնց պատմություններն իսկական հայրենասիրության դաս է տալիս սովորողներին: ՆԶՊ-ի դասավանդման ընթացքում աշակերտների մոտ ձևավորվում են բազմաթիվ կարևոր կարողություններ ու հմտություններ, որոնք թույլ կտան հստակ ու դիպուկ կողմնորոշվել այնպիսի ծայրահեղ իրավիճակներում, ինչպիսիք են՝ մարտական գործողությունները կամ արտակարգ այլ իրավիճակներ: Հենց այս առարկայի դասավանդման ընթացքում է ձևավորվում տղա սովորողների առնականությունը, կամային բարձր որակները, հանդուրժողականությունն ու ինքնակառավարումը: Այս հատկանիշներն անչափ կարևոր են նախազորակոչային տարիքի սովորողների համար: Դրանք հետագայում շատ են օգնում վերջիններիս պարտադիր զինվորական ծառայության ժամանակ: Զինղեկի մեծագույն պարտականությունն է աշակերտի համար տեսանելի դարձնել հայրենասիրական դաստիարակության կարևորությունը: Բարոյական արժեքների հիման վրա ձևավորված հայրենասիրական կրթությունը ամբողջ հանրային գիտակցության հիմնական բաղադրիչն է, որի վրա է հիմնվում ազգի հարատևությունը: Հայրենասիրական դաստիարակությունը հայերի համար անչափ կարևոր է: Մեր կենսակերպը, բարոյական նորմերն ու արժեքային համակարգն ամբոջապես հիմնված է հայրենասիրական գաղափարների վրա: Հենց այս հանգամանքով պայմանավորված՝ հանրակրթական դպրոցը ևս ամեն ջանք գործադրում է, որ սերունդն ունենա հայեցի դաստիարակություն, ճանաչի իր անցյալն ու փառավոր հաղթանակները: Հայրենասիրությունը եղել և մնում է հայ ժողովրդի ինքնության բնորոշ գիծ, հատկանիշ, պետականության զարգացման ոգեղեն հիմք: Հայրենասիրության գաղափարները Հայաստանում ծնունդ են առել հայ ժողովրդի ծագման, ձևավորման ակունքներում, ամրացվել Քրիստոնեության ընդունման հետ: Փաստորեն, պատմական նման իրադրություններում հայրենասիրությունը ձեռք է բերել պետական գաղափարախոսության մակարդակ : Գիտակցելով այս խնդրի հրատապությունը ներկա փուլում՝ անհրաժեշտ է հասկանալ, որ դպրոցահասակների անհատական կազմավորումը պարզապես անհնար է առանց հայրենասիրական զգացմունքների դաստիարակության: Զինղեկի անմիջական մասնակցությամբ պետք է հաճախակի անցկացնել միջոցառումներ, հարգանքի ու հիշատակի երեկոներ, մեծ խանդավառությամբ նշել մեր պետական տոները: Նմանօրինակ միջոցառումներն անչափ կարևոր են կրթադաստիարակչական գործընթացում:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Սույն հետազոտության արդիականության համար հիմք է հանդիսացել մարտահրավերներով լի այս ժամանակաշրջանում առավել հայրենասեր, բարձր կամային որակներով օժտված, ֆիզիկապես ու հոգեպես առողջ սերունդ ձևավորելու անհրաժեշտության կարևորումը:

Հետազոտության խնդիրն է

•Կարևորել ՆԶՊ առարկայի դերը աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակության զարգացման, ռազմարվեստի վերաբերյալ գիտելիքներ ու գործնական կարողություններ ձևավերելու առումով, ինչպես նաև մատնանշել աշակերտի ծնողների հետ զինղեկի կողմից տարվող աշխատանքների հրատապության:

• Դիտարկել ակտիվ ու աշակերտակենտրոն ուսուցման դերը սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը բարձր հենքի վրա դնելու տեսանկունից:

• Ուսումնասիրել առարկայի դասավանդման ընթացքում զինղեկի կատարած համալիր դաստիարակչական աշխատանքի դերը սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորման գործընթացում:

Հետազոտության նպատակը:

• Ուսումնասիրել ՆԶՊ ուսումնական առարկայի շրջանակներում ուսուցչի կողմից ընտրված մեթոդների ու եղանակների արդյունավետությունը:

• Վերլուծել աշակերտի ծնողների հետ տարվող աշխատանքների

` • նպաստել հոգեպես հարուստ և սոցիալապես ակտիվ կեցվածքով հայ քաղաքացու ձևավորմանը,

• դեռահասներին հետ պահել զանազան օրինախախտումներից, հայտնաբերել ու կանխել նրանց մոտ առկա վնասակար սովորույթները,

• պահպանել և տարածել ՀՀ պետական խորհրդանիշերի՝ զինանշան, դրոշ, օրհներգ բովանդակությունն ու նշանակությունը,

• բարձրացնել աշակերտների՝ ազգային շահերի պաշտպանության ձևավորմանը նպատակաուղղված ռազմահայրենասիրական դաստիարակությունը,

• սովորողների մեջ սերմանել հանդուրժողական և հարգալից վերաբերմունք շրջապատի նկատմամբ,

• յուրաքանչյուր սովորողի մոտ արմատավորել սեփական ազգի պատմության ու պետության կայացման գործում իր մասնակցության կարևորությունն ու դրա իրական հնարավորությունը,

• նպաստել դպրոցում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտին,

• կառավարել դեռահասների անկանոն վարքագիծը

, • խրախուսել սովորողների ինքնանդրադարձ կատարելու կարողությունը, լավ օրինակների ցուցադրմամբ հնարավորություն ստեղծել սովորողների համար սեփական սխալները գիտակցելու,

• նպաստել դպրոցում հայրենասիրական դաստիարակության համակարգի կայացմանը, դրա արդյունավետ գործունեության մշտական կատարելագործմանը,

• ծանոթացնելու սովորողներին ռազմական գործին, հարևան պետությունների բանակային ու ռազմական առանձնահատկություններին, կարողություններին:

Դաստիարակչական աշխատանքը՝ որպես շարունակական և երկարատև գործընթաց, բավական ընդգրկուն է: Պետական պատվերի հիմքում դրված է հասարակության մեջ այնպիսի քաղաքացու ձևավորման խնդիրը, որն իր գործողություններով ու մղումներով պիտանի կլինի պետությանը և հասարակությանը: Հանրակրթական դպրոցներին ներկայացվող ժամանակակից պահանջների իրականացումը նոր խնդիրներ է առաջադրում ուսումնական առարկաների դասավանդման ընթացքում: Հանրակրթական դպրոցի գործող ծրագրերում և չափորոշիչներում հատուկ ուշադրությունն է դարձվում ուսումնական գործընթացի այնպիսի կառուցմանը, որը ապահովում է ոչ միայն գիտելիքների ձեռքբերումը, այլ նաև սովորողների մոտ առարկաների, երևույթների, արժեքների ընկալման, վերլուծման, ընդհանրացման գործընթացների ձևավորումը և, ամենակարևորը, գործնականում այդ գիտելիքների կիրառումը: Անձի համակողմանի զարգացումն իրենից ենթադրում է, որ ցանկացած դժվարություն մարդ կարող է կառավարել՝ հենվելով իր իմացական ու գործառական 8 ներուժի, ինչպես նաև արժեքային համակարգի վրա: Հենց սրանով է պայմանավորված կրթության արդիականացման գործընթացը, որի հիմնական նպատակն է ունենալ ինքնուրույն, նախաձեռնող, նորարար ու հայրենասեր սովորող: Սովորողների ուսուցման ու դաստիարակության առաջնային պատասխանատուն հարակրթական ուսումնական հաստատությունն է, ուսուցիչը, ճիշտ պլանավորած դասը, որտեղ սովորողը կարող է բացահայտել աշխարհն ու ինքն իրեն: Կարող եմ արձանագրել, որ կրթության ցանկացած ոլորտում անհնար է որևէ բարեփոխում իրականացնել առանց ուսուցչի մասնակցության և աջակցության: Պայմանավորված ժամանակակից աշխարհի մարտահրավերներով՝ այսօր առավել քան երբեք, ուսուցիչը պետք է գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում իր մասնակցության կարևորությունը, ձեռք բերի ու զարգացնի այնպիսի մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ, որոնք թույլ կտան կառավարելի դարձնել դասարանը, հաղորդել արժանահավատ գիտելիքներ, ձևավորել արժեհամակարգ: Անշուշտ, դասը վարելը, գիտելիք տալը ուսուցչի՝ օրենքով ամրագրված պարտականությունն է, այնուամենայնիվ ուսուցիչը իր աշխատանքը չպետք է դիտարկի որպես պարտավորություն, հակառակը՝ նա պետք է սիրի ու գնահատի իր սովորողներին, անդադար ինքնակրթվի ու նոր

հմտություններ ձեռք բերի, որպեսզի դասապրոցեսն անցնի հետաքրքիր ու բովանդակալից, իսկ սովորողն իրեն կարևոր ու պաշտպանված զգա դասին:

1.2 Զինղեկի և աշակերտի ծնողների համագործակցությունը՝ որպես կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման միջոց

Ուսուցչի գործունեությունն ուղղված է անձնավորության ձևավորմանը և զարգացմանը, ինչն իրականացվում է ուսումնական գործընթացի ընթացքում: Ուսուցչի գերխնդիրն ու առաքելությունը մարդկային էության բացահայտումն է, հոգու կառուցումը: Այս առումով անգնահատելի է ուսումնական գործընթացում աշակերտի հետ տարվող ճիշտ ու համակողմանի աշխատանքը, որն անկյունաքարային է ու կարևոր անձի հետագա կենսագործունեության համար: Մի չնչին բացթողում, մեթոդի կամ հնարի սխալ ընտրությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ աշակերտի հոգեկերտ-վածքի, ընկալումների, առհասարակ բնականոն զարգացման վրա, ուստի այս պարագա-յում շատ ենք կարևորվում ծնող-ուսուցիչ կապը: Առողջ համագործակցության արդյունքում, հնարավոր է անցնցում անցնել ուսումնական բոլոր մակարդակները ու բազում հմտություններով, նոր գիտելիքներով մտնել կյանքի հաջորդ շրջափուլ: Անփոխարինելի է «ՆԶՊ» առարկայի ուսուցչի՝ որպես կրթողի դաստիարակողի, ուղղորդողի, խրախուսողի դերը աշակերտի առաջադիմության, մոտիվացիայի, աշխատունակության բարձրացման հարցում, հայրենասիրական դաստիարակության գործում: Զինղեկի համագործակցային աշխատանքը աշակերտի ընտանիքի հետ մեծ ազդեցություն ունի կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման վրա: Երկու սուբյեկտների առողջ համագործակցումը, խնդիրների միասնական վերհանումը, դրանց լուծումները փնտրելու ճանապարհին փոխգործակ-ցությունը նպաստում է, որ աշակերտի մոտ մեծանա պատասխանատվության զգացումը, նա ավելի լուրջ մոտենա ուսումնական գործընթացին: Ստացվում է, որ երկու կողմերը այս գործընթացում փոխլրացնում են միմյանց՝ նպատակ ունենալով անցնցում ապահովել սովորողների՝ կրթություն ստանալու իրավունքը: Անշուշտ, զինղեկը պատասխանատու է իր առարկայի դասավանդման արդյունավետության համար և հանդիսանում է ուսումնական գործընթացի հիմնական կազմակերպիչն ու իրակա-նացնողը: Սակայն այս տեսակետից անկյունաքարային է նաև աշակերտի ծնողի կամ օրինական ներկայացուցչի պատասխանատու վերաբերմունքը կրթական գործընթացի նկատմամբ, վերջինիս կողմից ուսուցչի հետ համագործակցելու, աշակերտին վերահսկելու ու առաջնորդելու գործառույթը: Աշակերտի կրթական կարիքների հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի փոխներգործության հիմքում պետք է դրված լինեն ընդհանուր հետաքրքրություններն ու նպատակները: Այդ փոխհարաբե-րությունների հիմքում պետք է դրվեն միմյանց նկատմամբ վստահության, փոխադարձ

հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության սկզբունքները: Նման միջավայրի ապահովումը կարող է խթանել զինղեկի աշխատանքի արդյունավետությունը, քանի որ ծնողների հետ համատեղ ջանքերով կարելի է հասնել սովորողի՝ ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ կարողունակությունների անցնցում ձևավորմանը, հայրենասիրական զգացմունքների ամրակայմանը: Աշակերտին, ծնողներին և ուսուցիչներին պետք է միավորեն ընդհանուր մտահոգություններ, խնդիրներ, նպատակներ ու դրանց հասնելու լուծումներ, եղանակներ: «Սովորողի ծնողն իրավունք ունի համագործակցելու ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով »:

Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը երկարատև ու բարդ գործընթաց է, որի հիմքում պետք է դրված լինեն մի շարք սկզբունքներ, որոնց թվում են.

- Փոխադարձ հարգանքը ծնող-ուսուցիչ հարաբերություններում,
- Առողջ բարոյահոգեբանական միջավայրը,
- Ընդհանուր շահի շուրջ բանակցելու, ելքեր գտնելու կարողությունը,
- Մշտադիտարկումը, խնդիրների շուրջ ընդհանուր ելքերի որոնումը,
- Սխալների ընդունումը, վերլուծություն, թերի կողմերի արձանագրումը,
- Հայրենասիրական դաստիարակության կարևորումը,
- Հումանիստական մոտումները, սեփական շահի ստորադասումը:

Այս երկու օղակների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվի պլանավորված ու համակարգված ձևով: Ծնողները և այս պարագայում զինղեկը պատասխանատվություն են կրում միևնույն սովորողի կրթության ու դաստիարակության համար, հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի, երբ վերջիններս մշտապես կապ պահեն միմյանց հետ, ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, ինչպես նաև փորձեն համատեղ ուժերով մշակել դաստիարակչական մեխանիզմներն ու դրանց լուծման ուղիները: Զինղեկի և ընտանիքի փոխներգործության բնույթը պայմանավորող հանգամանքներից է ծնողների իմացական կարողությունները , հայացքներն ու դիրքորոշումները: Զինղեկը կարող է հաճախակի հանդիպումներ կազմակերպել նաև ծնողական համայնքի հետ, տալ նրանց մասնագիտական խորհրդատվություն: Շատ կարևոր է նաև ծնողի կողմից ազնիվ ու անվերապահ մոտեցումն ուսուցչին, դպրոցին: Հայրենասիրական դաստիարակությունը պետք է դրված լինի ընտանեկան դաստիարակության ակունքներում, ինչը կարող է նպաստել, որ դպրոցում և ընտանիքում սովորողի դաստիարակության գործընթացն ունենա նույն ուղղությունը: Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի

լավ արդյունքներ: Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում : Առհասարակ ուսումնական գործընթացին ծնողների ներգրավվածությունը մեծապես կարող է պայմանավորել սովորողների հաջողությունը: Անկախ ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակից, ծնողի կրթության աստիճանից՝ վերջինիս ներգրավվածությունը աշակերտի կրթության գործընթացին անփոխարինելի կարելի է համարել սովորողի զարգացման վրա թողած ազդեցության առումով: Այն աշակերտը, ում ծնողներն ավելի բաց են համագործակ-ցության համար, հաճախակի են հետաքրքրվում իրենց երեխաների վարքով ու առաջադիմությամբ, ավելի են մոտիվացվում: Արդյունքում՝ նրանք դառնում են ավելի պատասխանատու, բարձրանում է աշխատունակության մակարդակը և ունենում են հաջողություններ: Ցանկացած ծնող պետք է ամենայն պատասխանատվությամբ մոտենա իր երեխայի կրթության ու դաստիարակության գործընթացին: Այն ծնողներն, ովքեր չունեն այս գիտակցումը, իրապես օգնության կարիք ունեն, և մանկավարժական աշխատողները՝ այդ թվում զինղեկը, պետք է ամեն ինչ անեն, որ տվյալ ծնողը հասկանա իր բացթողումն ու ներգրավվի սեփական երեխայի կրթության ու դաստիարակության գործընթացներում: Այսպիսով, վստահաբար կարող ենք ասել, որ կրթության համակարգում ավելի լավ արդյունքների հասնելու, աշակերտների կրթության ու դաստիարակության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ: Իսկ ծնողները, առաջնային համարելով սեփական երեխայի լավ ու որակյալ կրթությունը, պետք է մշտապես համագորցակեն դպրոցի մանկավարժական աշխատողների, այլ սովորողների ծնողների հետ:

Դաստիարակությունը ավագ սերնդի կոմից օրինակելի փորձի փոխանցումն է, նրանց կյանքին և աշխատանքին նախապատրաստելու նպատակով, ինչն անհրաժեշտ է առողջ հասարակություն ձևավորելու համար: Հանրակրթական ուսումնական հաստատութ-յունում ուսուցման և դաստիարակության գործընթացները փոխկապակցված են և լրացնում են միմյանց: Դաստիարակել՝ կնշանակի սովորողին տալ լավի, բարու, բարոյականի, բարեվարքության, կյանքի նկատմամբ հանդուրժողականության, պայքարելու, ազնիվ ու արդար մղումներով ապրելու գիտակցում: Որևէ դեպքում ընդունված էթիկայի նորմերը կամ համակեցության կանոնները չի կարելի պարտադրել երեխային բռնության՝ թեկուզ ամենատարրական դրսևորումներով: Մեծահասակը՝ծնողը, ուսուցիչը կամ այլ մանկավարժական աշխատողը, պետք է քաջ գիտակցի, որ դաստիարակության հիմքում պետք է դրվի բացառապես դրական օրինակը: Հենց այդ դրական օրինակն է, որ կարող է մոտիվացնել սովորողին սիրել ու հարգել ուսուցչին, ընկերոջը, ծնողին, պատկառանքով վերաբերվել հայրենիքին, ազգային արժեքներին, չծուլանալ, չչարանալ, պահել բարեվարքության կանոնները: Կարծում եմ, որ այսօրեական իրականության մեջ սովորողն ունի հնարավորություն

ինքնուրույն հասկանալու, թե ինչպիսին է ուզում լինել ապագայում, արդյոք ցանկանում է սովորել այնքան, որ կարողանա արժանապատիվ 4 մարդ մեծանալ, թե նրա համար որևէ արժեք չունեն բարոյական արժեքները, մարդասիրությունն ու առողջ հարաբերությունները շրջապատի հետ: Պայմանավորված կրթական համակարգում սովորողի դերի վերանայմամբ, որի հիմքում ընկած է աշակերտակենտրոն ուսուցումը՝ սովորողին որևէ բան այլևս չի պարտադրվում: Այսօրվա կրթական համակարգը հաշվի է նստում սովորողի կամարտահայտության հետ, ուսուցիչն ուղղորդում է, ցույց տալիս դրական օրինակը, բաց որևէ պարագայում իրավունք չունի դիմել պարտադրանքի ու «բռնության»: Այս պարագայում սովորողին մնում է վերլուծել, կշռադատել, եզրահանգումներ կատարել՝ դասի ընթացքից վերցնելով այն ամենը, ինչը կարող է վերջինիս մեջ դաստիարակել բարձր մարդկային հատկանիշներ: Հանրակրթական դպրոցում սովորողների դաստիարակության մեծագույն չափաբաժինը դրված է ՆԶՊ-ի ուսուցչի ուսերին: Վերջինս իր պատկառելի կերպարով շատ սովորողների համար դառնում է օրինակ, նրա խոսքը արժանանում է հարգանքի, ուստի զինղեկի աշխատանքից շատ բան է կախված: Կարծում եմ, որ առարկայի բովանդակային առանձնահատկությունները կարող են նպաստավոր պայմաններ ստեղծել սովորողների մեջ բարձր կամային հատկանիշներ, կարգապահություն, ռազմահայրենասիրություն ու անձնային վեհ որակներ դաստիարակելու համար: Հատկապես կարևոր եմ համարում հայրենասիրական դաստիարակությունն առարկայի դասին: Այստեղ սովորողին տրվում է հայրենաճանաչության մեծ չափաբաժին: Այս առարկայի դասավանդման շրջանակներում սովորողը ծանոթանում է ժամանակակից ռազմարվեստի տեսությունը, այդ համատեքստում գնահատում հակառակորդ դիտարկվող երկրների ռազմական ներուժը, ինչն անչափ կարևոր է: Ժաղովրդական իմաստությունն ասում է. «Ձեր ընկերներին մոտ պահեք, իսկ ձեր թշնամիներին՝ էլ ավելի մոտ»: Հենց այս գիտակցումը պետք է լինի առանցքային այսօրվա սովորողի համար: Գիտելիքներով, կարողություններով ու բարձր արժեքային համակարգով զինված մեր մատաղ սերունդը պետք է քաջ գիտակցի, որ հենց դրանք են այն եղանակները ու ուղիները, որոնցով կարելի է պաշտպանել հայրենիքն ու հայականությունը, լինել արժանապատիվ քաղաքացիներ: Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է «ՆԶՊ» ուսումնական առարկայի չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքներով, համաձայն որոնց՝ ուսուցիչն ամեն կերպ պետք է սովորողների մեջ դաստիարակի հայրենասիրություն և դրա վրա հիմնված արժեքային համակարգ, ինչը, իմ համոզմամբ, հույժ կարևոր է՝ հաշվի առնելով մեր երկրի առջև ծառացած մարտահրավերները:

1.3 ՆԶՊ-ի դասավանդման ընթացքում աշակերտների հայրենասիրական դաստիարակության եղանակները

Հանրակրթական դպրոցի գործող ծրագրերում և չափորոշիչներում հատուկ ուշադրությունն է դարձվում ուսումնական գործընթացի այնպիսի կառուցմանը, որը ապահովում է ոչ միայն գիտելիքների ձեռքբերումը, այլ նաև աշակերտների մոտ առարկաների, երևույթների, արժեքների ընկալման, վերլուծման, ընդհանրացման գործընթացների ձևավորումը և, ամենակարևորը, գործնականում այդ գիտելիքների կիրառումը: Ուսուցման արդյունավետությունը չափվում է ոչ միայն և ոչ այնքան աշակերտի յուրացրած գիտելիքներով, որքան նրա ձեռք բերած կարողություններով՝ շեշտը դնելով արդյունքի վրա, այսինքն՝ ինչ կարող է նա անել: Ասվածից կարող ենք եզրահանգել, որ աշակերտի մոտ ինքնուրույն գործելու, որոշումներ կայացնելու, նախաձեռնողական վարք ձևավերելու համար առաջնային նախապայմաններ են հանդիսանում ուսումնական գործընթացի ժամանակ հնարավորություններ ստեղծել, որպեսզի սովորողները հնարավորություն ունենան որոշում կայացնելու, այս կամ այն խնդրի վերաբերյալ պատասխանատվության գիտակցում ձևավորելու, աստիճանաբար կայացման ու ձեռքբերումների հասնելու: Անշուշտ, այս ամենի համար առաջին հերթին կարևոր է, որ աշակերտը ուսումնական գործընթացից կարողանա ստանա առավելագույնը և կարողանա գործել ինքնուրույն: Արդի կրթական բարեփոխումների շրջանում մեծապես կարևորվում է կրթության առաջնային շահակիցների՝ աշակերտների դերը դասի ընթացքի ժամանակ: Այս կերպ աշակերտը, պասիվ դաշտից ակտիվ դաշտ գալով, դառնում է էլ ավելի ինքնուրույն, նախաձեռնող, փորձում է ստեղծագործաբար մտածել ու գործել՝ արդյունքում ամբարելով գիտելիքների, հմտությունների ու կարողությունների կայուն պաշար: Աշակերտի համար կարմիր գծերը ջնջելով, նորագույն մեթոդներով ու տեխնոլոգիապես հագեցած դասեր իրականացնելով՝ ուսուցիչը հեշտությամբ կարող է հասնել կրթության պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին՝ խթանելով սովորողների ինքնուրույն գործելուն, նախաձեռնող ու նորարար լինելուն և ստեղծագործաբար գործելուն: Այս ունակությունների զարգացումը կարելի է իրականացնել նաև ՆԶՊ-ի դասավանդման շրջանակներում: ՆԶՊ առարկայի ուսուցումը ուղղված է հատուկ վարժանքներով սովորողների բարոյահոգեբանական հատկանիշների ձևավորմանն ու ուժեղացմանը (հայրենասիրություն, կարգապահություն, պատասխանատվություն, ինքնավստահություն, կոլեկտիվիզմ), որոշակի ունակությունների զարգացմանը և նոր կարողությունների առաջացմանը (ֆիզիկական ունակություններ, ֆիզիոլոգիական հատկանիշներ, հիշողության, ուշադրության կենտրոնացում ու փոխատեղում, վերլուծական մտածողություն):

ՆԶՊ-ի դասավանդման ընթացքում սովորողի մեջ հայրենասիրական զգացմունքներ դաստիարակելիս ուսուցչի գերխնդիրը ոչ միայն հայրենիքը սիրել տալն է, այլև լավ մարդ, քաղաքացի դաստիարակելն է: Որպեսզի առարկան հետաքրքրի ու շահագրգռի սովորողին, հարկավոր է հաճախ դուրս գալ գրքային կաղապարներից ու սովորողին

ցույց տալ առարկայի գործնական կիրառելիությունը, ինչը սույն առարկայի պարագայում ոչ միայն հնարավոր է, այլև պարտադիր:

ՆԶՊ առարկայից գործնական դասերը սովորողների մեջ զարգացնում են մի շարք կարողունակություններ, որոնցից են.

• զինվորական պատրաստության հիմունքների վերաբերյալ գիտելիքների խորացումն ու համակարգումը,

• մարտական և այլ արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ կարողությունների ձեռքբերում և հմտությունների զարգացում, գիտելիքների յուրացում,

• հայրենիքի պաշտպանության գործին անվերապահ պատրաստակամության ձևավորում,

• հայրենիքի պաշտպանությանը միտված՝ սովորողների մասնագիտական կողմնորոշում (ռազմական, ռազմատեխնիկական, ռազմաարդյունաբերական, տեղեկատվական անվտանգության, ռազմական բժշկության, արտակարգ իրավիճակներ),

• կրթությունը ռազմական ուղղությամբ շարունակելու համար անհրաժեշտ հիմքերի ապահովումը և այլն :

Հոգեբանական տեսանկյունից միջին և ավագ դպրոցի շրջափուլերը կարելի է համարել բարենպաստ սովորողի մոտ նախաձեռնողականության զարգացման, սեփական մտքերն ու հետաքրքրությունները դասի ընթացք բերելու համար, քանի որ տարիքային այս կատեգորիայի մոտ ընգծված կերպով է արտահայտված ինքնակայանալու, ինքնադրսևորվելու ցանկությունը: Այս գործընթացի վրա էականորեն ազդում է երեխայի հարաբերությունների համակարգը ծնողների, ուսուցիչների, հասակակիցների հետ, ուստի վերջինիս ցանկությունների ու հետաքրքրությունների սահմանափակումը ուսուցչի կողմից կարելի է դիտարկել մանկավարժական սխալ մոտեցում: ՆԶՊ-ի դասավանդման շրջանակներում զինղեկի և աշակերտի արդյունավետ փոխգործակ-ցության, եկուստեք ցուցաբերած սոցիալական ակտիվության արդյունքում հնարավոր է հասնել նոր կարողությունների ու հմտությունների ամրակայմանը: Սոցիալական ակտիվություն հասկացությունը արտացոլում է անձի գործելու բնույթը սոցիալական խմբում, հասարակության մեջ: Այդ ակտիվությունը կապված է այն բանի հետ, երբ անձի հետաքրքրությունները դառնում են ակտիվ գործելու պատճառ, երբ նրա աշխարհաճանաչման ձգտումներն ու նպատակադրումները ուղղվում են իրականության վերափոխմանը: Անձի ակտիվության հիմնական պատճառն այն է, որ հակասություններ են ստեղծվում նրա կենսապայմանների ու օբյեկտիվ պահանջմունքների միջև, և նա ակտիվանում է այդ անհամապատասխանությունը հաղթահարելու համար :

Այսպիսով, հանրակրթական դպրոցներում իր ուրույն դերն ու նշանակությունը մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում ունի նաև ՆԶՊ-ն: Մեծ է առարկայի նշանակությունն աշակերտների հայրենաճանաչության և ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, հիմք ընդունելով հետազոտության ընթացքում կատարած մեր պնդումները՝ կատարենք մի քանի արձանագրումներ.

• «ՆԶՊ» ուսումնական առարկան առանցքային դերակատարում ունի աշակերտների կրթության ու հայրենասիրական դաստիարակության գործընթացում:

• Զինղեկը ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ իրականացման համար պետք է համագործակցային հարաբերություններ ստեղծի աշակերտի, վերջինիս ծնողի կամ օրինական ներկայացուցիչների, այլ մանկավարժական աշխատողների հետ:
• Զինղեկը՝ որպես ուսումնական գործընթացի հիմնական կազմակերպիչ և պատասխանատու, զարգացնում է սովորողների ակտիվությունը, ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, դաստիարակում է վերջիններիս մեջ հայրենասիրական բարձր գիտակցություն:

• Զինղեկը, աշակերտի ծնողը վերջինիս կրթության ու դաստիարակության հարցում պետք է ունենան միասնական պահանջներ ու նպատակներ:

• Զինղեկը, աշակերտի ծնողի կամ օրինական ներկայացուցիչների համար պետք է ապահովի մանկավարժական-լուսավորչական խորհրդատվություն՝ նպատակ ունենալով զարգացնել նրանց մանկավարժական գիտելիքները:

• Զինղեկը պարտավոր է աշակերտի զարգացման ընթացքի վերաբերյալ տեղեկություն տալ ծնողին կամ օրինական ներկայացուցիչներին՝ ակնկալելով նրանցից հետադարձ կապ:

• Զինղեկն իր հայրենասիրական գաղափարներով, զինվորական պահանջկոտությամբ պետք է նպաստի դպրոցում կարգապահության ամրապնդմանը, բանակ-դպրոց կապերի սերտացմանը:

• Զինղեկը պետք է ճիշտ ու կառուցողական վարի դասը՝ հաշվի առնելով աշակերտների անհատական պահանջմունքները, ոգևորի ու խրախուսի նրանց, տա կյանքի իրական դասեր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1 http://forum.armedu.am/showthread.php/854 Հայ դասականների մտքի զանձարանից:

2 https://arar.sci.am/dlibra/publication/183715/edition/166940/content Գ. Խաչատրյան, «Հասարակության հայրենասիրական դաստիարակության գաղափարական հիմքերը Հայաստանում»:

3 www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք:

4 http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf Ծնողների ներգրավվածությունը, Թբիլիսի, 2015:

5 https://escs.am/am/news/7884

6 https://escs.am/files/files/2021-05-06/114a72e4ebca1a68bcd63c2e091ccc9f.pdf ՆԶՊ առարկայի փորձնական չափորոշիչ և ծրագրեր, (8-12-րդդասարաններ):

7 http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/Arzumanyan.pdf Ս. Արզումանյան, Հոգեբանություն, Երևան, 2003: